Զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

08.09.2025

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը: Նիստին ներկա էին ԽՄ անդամներ Գայանե Աֆյանը, Մարինե Հարությունյանը, Համլետ Խալաթյանը, Ալեքսանդր Վիրաբյանը, Գևորգ Հակոբյանը:

Նիստին ներկա էին նաև համայնքապետարանի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Բալաբեկյանը, Երաժշտական դպրոցի տնօրեն Վահագն Մարգարյանը, Զարգացման ծրագրերի և ՏՏ բաժնի մասնագետներ Անահիտ Մամիկոնյանը, Սոնա Աթայանը, ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի մասնագետներ Գայանե Անտոնյանը, Էմմա Միրզոյանը, Մարիամ Քոչարյանը, բնակիչ Գագիկ Գաբրիելյանը:

Օրակարգում հետևյալ հարցերն էին.

1. Համայնքապետարանի կողմից ցուցաբերած մասնակցայնության, հաշվետվության, թափանցիկության մեխանիզմների ներդրում և գործարկում,

2. Համատիրությունների աշխատանք,

3. Թափառող շների հարց,

4. Աշխատատեղերի հարց,

5. Ժամանցի վայրերի խնդիր,

6. Ճանապարհների բարեկարգման խնդիր,

7. Աղբահանության հարց,

8. Տրանսպորտի հարց,

9. Անձնագրային ծառայության հետ վերադարձի հետ կապված առաջարկների և լուծման ուղիների քննարկում:

Սևակ Վարդանյանն ողջունեց ներկաներին: Ներկայացրեց օրակարգի հարցերը: Մարինե Հարությունյանը սկսեց ներկայացնել իր կողմից առաջադրված հարցերը: Առաջինը համայնքապետարանի կողմից ցուցաբերած մասնակցայնության, հաշվետվության, թափանցիկության մեխանիզմների գործարկումն է: Նշեց, որ այս ուղղությամբ որոշակի դրական փոփոխություններ նկատվել են, պետք է սակայն շարունակական աշխատանք տանել, որ բնակիչները համայնքային նշանակության հարցերում ունենան մասնակցություն: Պարբերաբար պետք է բնակիչների հետ աշխատել, քանի որ հաճախ են ամենատարբեր հարցերով դիմում Մարինե Հարությունյանին: Վարդանյանն ասաց, որ շատ լավ է, որ որպես ՀԿ սեկտորի ներկայացուցիչ, իրեն էլ են դիմում: Համայնքապետարան էլ են բնակիչները շատ հաճախ դիմում, սոցիալական ցանցերով են իրենց խնդիրներն ու առաջարկները տեղ հասցնում, այս ուղղությամբ դրական միտումներ կան:

Մարինե Հարությունյանը նշեց՝ հաշվետվողականության մի ձև է, որ ԽՄ նիստի օրակարգը հանրայնացվեր, և բնակիչներն իմանային՝ իրենց հարցերը քննարկվում են: Հասարակայնության հետ կապերի բաժնի պետը նշեց, որ արձանագրությունը կհրապարակվի:

Մարինե Հարությունյանը նշեց, որ իրեն բնակիչները դիմել են մի շարք հարցերով, որոնցից կարևորեն են՝ կանաչ գոտիների ընդլայնում, թափառող շների հարցի լուծում, մաքրության որակի բարելավում /աղբի մեքենան բակ չի մտնում, աղբը ցրվում է/, անձնագրայինն էլ է խնդիր, սրան գումարած ոչ կենտրոնական ճանապարհների վերանորոգում, քաղաքի ծայրամասերին ուշադրության դարձնում, Չարենցի արձանի ներկի մաքրում, թեքահարթակների տեղադրում, գեղեցիկ նստարաններ, անօրինական կառուցապատման դադարեցում, Սարալանջ թաղամասի խմելու ջրի հարց, 9-րդ թաղամասի ասֆալտապատում:

Սևակ Վարդանյանն ասաց, որ այս հարցերը համայնքապետարանի ամենօրյա քննարկման հարցեր են: Սկսեց թափառող շների հարցից: Նշեց ,որ օրհասական ու կարևոր հարց է, որն անգամ հանրապետության մակարդակով չեն կարողանում լուծել, մշտապես թվաքանակներ են ճշտվում, ինչ-որ մտքեր են փոխանակվում, սակայն լուծումներ դեռ չկան: Միակ լուծումը ստերջացումն է, որն էլ համայնքն անում է: 1 շան խնամքի համար հաշվումները ցույց են տալիս, որ պետք է 25000-30000 դրամ ամսական: Հարակից համայնքների փորձն էլ է ուսումնասիրվել, դեռ ոչ մեկի մոտ չի ստացվել ապաստարանի գաղափարը: Սրան պետական մոտեցում է պետք: ԱԻՆ-ը մեզ չի օգնում, ստացվում է, որ բնակչին չգիտենք՝ ուր ուղղորդել:

Մարինե Հարությունյանն առաջարկեց բնակչին իրազեկել, թե ինչ է արվում այս ուղղությամբ: Սևակ Վարդանյանն ասաց, որ բնակչին այսքանով չենք բավարարի, մենք դեռ հստակ լուծումներ չունենք առաջարկելու: Վահագն Մարգարյանն ասաց, որ շների լինել-չլինելու հարցը միայն մասնագետները կարող են որոշել: Այդ դեպքում ինքն էլ բարձրաձայնում է ավտոմեքենաների հարցը, դա խանգարում է բոլորին, միշտ կարելի է բողոքել, բայց պետք է տրամաբանական լինի բողոքը: Պետք է մասնագետ գա ու ասի, թե այս տարածքի համար որքան շունն է նորմալ, որքանը ոչ՝ սկսենք լուծումներ գտնել: Պարզապես վերացնելն էլ ճիշտ չէ:

Մարինե Հարությունյանն անցավ իր կողմից ներկայացված մյուս հարցին՝ համատիրությունների աշխատանքին: Նկուղների վիճակը մտահոգիչ է, առնետները շատ են, ջուր է լցվում, համատիրությունն ասում է՝ գումար հավաքեք, գանք անենք: ՏԱՊ-ով պետք է ներառել նկուղների հարցը:

Սևակն ասաց, որ այս հարցի շուրջ քննարկումներ արվել են, մեծածավալ աշխատանք է պահանջում նկուղների բարեկարգումը: Մարինեն նշեց, որ անդադար գումար են պահանջում բնակիչներից համատիրությունները, աշխատանքն էլ նկատելի չէ: Հա՛մ բնակչից են փող ուզում, համ համայնքապետարանից:

Սևակ Վարդանյանն ասաց, որ նկուղների հարցը բարդ է, բայց կփորձեն լուծումների գալ: Վահագն Մարգարյանը հարցրեց, կա՞ արդյոք հաշվարկ, թե 1 շենքին ինչքան գումար է անհրաժեշտ նորմալ սպասարկման համար: Սևակ Վարդանյանն ասաց, որ բնակիչը վճարում է 10 դրամ քառակուսու համար, դա չնչին գումար է: Վահագն Մարգարյանն ասաց, որ պետք է հստակ գրվի, թե քանի տարին մեկ է պետք վերանորոգումներ շենքում, պետք են հստակ հաշվարկներ: Սևակ Վարդանյանն ասաց, որ մոտ 7 տարի առաջ է սակագինն աննշան փոխվել, դրանից հետո ոչինչ չի փոխվել: Հիմա համատիրությունները պարզապես սպասարկում են, ոչ մի լրացուցիչ արժեք չեն ստեղծում: Մարինե Հարությունյանն ասաց, որ ծառայության որակը չի բարելավվում:

Համլետ Խալաթյանը համեմատեց Աբովյանի շենքերի հետ: Շատ աշխատանքներ են արվել՝ մուտքի ծածկատանիքներ են սարքել բոլոր շենքերում դեռ 2014-2015 թվականներից: 1քմ 6 դրամ էր այդ ժամանակ: Համատիրությունն ինքն է բոլոր աշխատանքները պլանավորում: Հիմա 10 դրամ է, արդեն նոր աշխատանքներ են տարվում: Ինքն ապրել է Աբովյանում, բնակիչներից ոչ մի դրամ չեն հավաքել:

Սևակ Վարդանյանն ասաց, որ Չարենցավանում չկա շենք, որտեղ ամեն ամիս ինչ-որ գործ չարվի: Պետք է հասկանալ՝ ինչն է մտնում համատիրության լիազորությունների մեջ, նոր պահանջել: Ալեքսանդր Վիրաբյանն ասաց՝ խողովակները թող գոնե մաքրեն, Սևակ Վարդանյանն ասաց, որ պատասխանները պետք է համատիրությունից ստանալ: Բնակիչ-համատիրություն հարաբերությունները պետք է լավ հիմքի վրա դնել: Մարինե Հարությունյանն առաջարկեց համատիրություն-բնակիչ պայմանագրերը վերակնքել, որ ամեն մեկն իմանա իր պարտականություններն ու իրավունքները, հստակ սահմանել ամեն ինչ:

Հաջորդ հարցով Մարին Հարությունյանն առաջարկեց բակերում կանաչապատում իրականացնել, մասնակից դարձնել բնակիչներին: Թող «Մշակույթ» ՀՈԱԿ-ը զբաղվի դրանով: Քաղաքաշինության հանձնաժողով կա, թող բնակչի հետ աշխատի անօրինական շինությունների, ավտոտնակների հարցը լուծելու համար: Սևակ Վարդանյանն ասաց, որ 2022 թվականից այս կողմ նոր ավտոտնակի տեղեր չեն տրվել: Այս տարի պետք է տեղադրեն նստարաններ գրեթե բոլոր շենքերի մուտքերի մոտ: Շուրջ 200 նստարան է լինելու: Նաև աղբամաններ կլինեն: Հիմա խաղահրապարակների ուղղությամբ են աշխատում: Այս տարի մի շարք խաղահրապարակներ են կառուցվում: Նորերի նախագծերն են ընթացքի մեջ:

Մարինե Հարությունյանը հարցրեց, եթե 8-13 շենքի տաղավարը քանդվի, կկառուցվի՞ խաղահրապարակ:

Սևակ Վարդանյանն ասաց, որ պետք է գան ընդհանուր եզրահանգման, բնակիչների հետ զրուցեն ու հասկանան՝ ինչպիսի խաղահրապարակ կստացվի:

Գագիկ Գաբրիելյանը բարձրացրեց լողվազանի հարցը:
Սևակ Վարդանյանն ասաց, որ այն չի կարող մնալ լողավազան, պետք է այլ տարբերակ մտածել, միգուցե կլինի ջրավազան և հարակից բարեկարգ այգի:
Սուբվենցիա կգրվի սրա համար: Նախկինում դա ոռոգման ջրով է աշխատել, այսօր հնարավոր չէ այդ պայմաններով ապահովել երեխաների անվտանգությունը:

Մարիամ Քոչարյանը խոսեց 8-5, 8-10 շենքերի հարակից տարածքում մայթերի բացակայությունից, ինչը խնդիր է հետիոտների համար:

Սևակ Վարդանյանն ասաց, որ փորձել են մաքրել տարածքն ու մի փոքր մայթ ստանալ: Ի սկզբանե այդ շենքերն առանց մայթ են կառուցվել:

Էմմա Միրզոյանը բարձրացրեց ջրամատակարարման հարց:

Սևակ Վարդանյանն ասաց, որ ամբողջ հանրապետության մասշտաբով կա խնդիր, սակայն դեռ լուծում չկա:

Հաջորդ հարցը ճանապարհների նորոգումն էր 9-րդ և 10-րդ թաղամասերում: Մարինե Հարությունյանը հարցրեց՝ ի՞նչ պատասխանի այդ մարդկանց:

Սևակ Վարդանյանն ասաց, որ այդ խնդիրը մեծ է, այդտեղ ի սկզբանե չի եղել ճանապարհ, շատ մեծ գումարներ են պահանջվում դրա համար: Պետք է փուլայինով այդ հարցը լուծել, մաս-մաս կատարել ասֆալտապատում: Սևակ Վարդանյանն ավելացրեց, որ Պռոշյան-Տերվիշյան մայթերի բարեկարգման աշխատանքները շուտով սկսվեն: Սալիկապատում կլինի: Կենտրոնական բոլոր փողոցների մայթերի բարեկարգման նախագծերն էլ կան:

Մարինե Հարությունյանն ասաց, որ աղբահանությունը պետք է ինտենսիվացնել: Սևակ Վարդանյանն ասաց, կան բացեր, հետևողական են իրենք, պետք է միասին աշխատեն, բացթողումների մասին տեղեկացնեն:

Գևորգ Հակոբյանը հարցրեց՝ ինչու է ԽՄ նիստերը վարում Սևակը Վարդանյանը: Սևակ Վարդանյանը նշեց, որ համայնքի ղեկավարն էլ է վարում նիստեր:

Հետո անձնագրային ծառայության հարցը քննարկվեց: Գևորգ Հակոբյանը նշեց, որ սա համայնքի թիվ 1 խնդիրն է: Իրենք հանդիպել են տարբեր պաշտոնյաների հետ, իրենց ասել են, որ ճիշտ է, համայնքում պետք է լինի անձնագրային, խոսք տվեցին, որ աշխատող կտրամադրեն Չարենցավանին: Հետո առաջարկեցին շրջիկի տարբերակը: Բոլորս էլ տեսել ենք, թե ինչպես է աշխատում շրջիկը: Այն չի արդարացնում իրեն, ամբողջական ծառայություններ չի մատուցում: Պահանջարկի 5 տոկոսն էլ չի ապահովում: Առաջարկում են դիմել ավագանուն, որպեսզի նիստի ժամանակ քննարկվի հարցը, և ավագանին ուղերձով դիմի վարչապետին, նաև գրել նամակ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ Նելլի Դավթյանին:

Մարինե Հարությանյանն ասաց, որ սա նվաստացնում է ՀՀ քաղաքացուն, մարդիկ անձնագիրը ստանում են փողոցի մեջտեղից՝ գազելի միջից:

Գագիկ Գաբրիելյանն ասաց, որ մարդկանց ինքնազգացողության վատանալու դեպքեր են եղել: Կարող են ավագանու նիստին ներկա գտնվել, ներկայացնել այս հարցը:

Գևորգ Հակոբյանն ասաց, որ հարցը չարենցավանցու ձեռքում է, պետք է բարձրաձայնել, հաստատ կլինեն լուծումներ:

ԽՄ նիստի ընթացքում որոշվեց՝ դիմել ավագանու անդամներին և նամակ գրել Նելլի Դավթյանին:

ԽՄ քարտուղար՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Բալաբեկյան